


10575.

ՀՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

Ա. ԱԿՈՒՆՅԱՆ
Ա. ԱԲՐԱՅԱՅԱՆ



ՈՐԱԿ Պ Հ.Ս.Պ
430 3

06/47.96) ԸՆ. ԽԶ. Ա. Խ

ԱՆՈՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 6

29 JUL 2010

54
55 FEB 2013
44-41

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 6-Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թթվածնի խմբի ելեմենտները՝ ծծումբ. ծծումբդիոքսիդ. ծծումբարիոքսիդ. ծծմբական թթու. ծծմբաջրածին. Սելեն և աել-լութ. Թթվածնի խմբի ելեմենտների ընդհանուր բնութագիրը: Թթվածնի խմբի ելեմենտների ֆիզիկական հատկությունների աղյուսակ: Թթվածնի խմբի ելեմենտների քիմիական հատկությունների աղյուսակ: Փորձեր թունդ ծծմբական թթվի հետ: Փորձեր նոսրացրած ծծմբական թթվի հետ: Փորձեր ծծմբային թթվի հետ: Փորձեր ծծմբաջրածնի հետ:

Ածխածնի խմբի ելեմենտները՝ ածխածին. ածխամոնօքսիդ. ածխագիռօքսիդ. ծծմբածխածին. ցիան և ցիան ջրածնական թթու. կալբիդներ: Սիլիցիում: Անագ: Կապար: Ածխածնի խմբի ելե-մենտների ընդհանուր բնութագիրը: Ածխածնի խմբի ելեմենտների ֆիզիկական հատկությունների աղյուսակ: Ածխածնի խմբի ե-լեմենտների քիմիական հատկությունների աղյուսակ: Փորձեր կարբոնատների հետ: Փորձեր խմելու ջրի հետ: Հարցեր: Գրակա-նություն:

Գյուղիքատի տպաքան
Պատ. № 416
Դաշտավայր № 8566. Տիրած 500

Թթվածնի խմբի ելեմենտները

Թթվածնի խմբի մեջ մտում են՝ թթվածինը, ծծումբը, սելինը և տելլութը:




Թթվածնի մասին արդեն ասել ենք առաջին առաջագրությունում. մնում է այստեղ ուսումնասիրել ծծումբը, սելինը և տելլութը:

ԾԾՈՒՄԲ.


Ծծումբը թթվածնի հետ միանալով տալիս է մի քանի ոքսիդներ, վորոնք իրենց հերթին ջրի հետ տալիս են հիդրօդշներ (թթուներ): Այստեղ մենք կուսումնասիրենք միմիայն յերկու ոքսիդները՝ ծծումբի ոքսիդ (SO₂) և ծծումբարիդ (SO₃):

Ծծումբի ոքսիդ—ծծումբի ոքսիդը գտնվում է հրաբխային գաղերի մեջ, գոյանում է՝


ա) Ծծմբի և սուլֆիդների այրման ժամանակ:



բ) CuO ծծմբի հետ տաքացնելիս



գ) ծծմբական թթուն ազդելով պղնձի վրա.



կերպապես դ) SO₂ գոյանում է քարածխի այրման ժամանակ, ուստի այն քաղաքներում, վորտեղ այրում են քարածուխ, ողբ հարուստ և լինում SO₂-ով

Տեխնիկայում մեծ մասշաբով SO₂ ստանում են պիրիտ (FeS₂) այրումից:

Ծծումբի ոքսիդների հետ միանալով տալիս է սուլֆիդներ: Օրինակ՝ BaO + SO₂ = BaSO₄, իսկ դիոքսիդների հետ տալիս է սուլֆատներ, որինակ՝ PbO₂ + SO₂ = PbSO₄.



Ծծումբի ոքսիդը ջրի հետ միանալով տալիս են ծծմբարին թթու (H₂SO₃), մասն ողի ազդեցությամբ ոքսիդանում

և կերածվում ծծմբարի (H₂SO₄): Ծծմբային թթուն հայտնի յե միմիայն ջրային նոսրացրած լուծույթներում, բայց նրա աղերը կայուն են և կոչվում են սուլֆիդներ:



Ծծմբային թթուն նատրիում հիդրոքսիդի հետ տալիս են՝

$$\text{H}_2\text{SO}_3 + 2\text{NaOH} = \text{Na}_2\text{SO}_3 + 2\text{H}_2\text{O}$$

գոլորշացնելով ջուրը ստացվում է Na₂SO₃ նատրիում: Ծծմբային թթուն վրապես յերկիմն թթու մետաղների հետ միանալով տալիս է թթու և չեղոք աղ: Թթու սուլֆատները ջրի մեջ լուծվում են, նրանք թթուների ազդեցության տակ հեշտությամբ քայրայվում են:




Հալոգեները ջրի ներկայությամբ, ծծմբային թթուն ոքսիդացնելով վեր են ածվում ծծմբական թթվի:




Ենք վորովինեան ծծմբային թթուն միանում է հալոգեների հետ, ուստի նրան կոչում են անտիքլոր:

H₂SO₃-ը ընդունակություն ունի միանալու թթվածնի հետ և դրա համար ել նա ծառայում է վորպես վերականգնող միջոց:

Ծծումբարի ոքսիդ—ծծմբական թթվի անհիդրիդը (SO₃) կարելի յե ստանալ ճնշման տակ այրելով ծծումբը կամ SO₂-ի և թթվածնի խառնությունի մեջ ելեկտրական կայծ թողնելով: Տեխնիկակայում SO₃ ստանում են SO₂-ից և թթվածնից կատալիզատորների ողնությամբ: Սրա համար մաքուր և չոր SO₂-ը թթվածնի հետ խառն 450°-ում բաց են թողնում պլատինյա ազդր են տի վրայով: Ավելի բարձր ջերմաստիճանում գոյացած SO₃-ը տարբարակություն է SO₂-ի և թթվածնի:



SO₃-ը չեղոք թափանցիկ բյուրեղ է, ոգում ծխում է, ջրի հետ միանալով արտադրում է մեծ ջերմություն և տալիս H₂SO₄: Ծծումբ տրիօքսիդը մետաղների ոքսիդների հետ տալիս է սուլֆատներ:





Ծծմբարի թթու.—ծծմբական թթուն հանդիսանում է ծծումբի տմնակարեր միացությունը: Տեխնիկայում ծծմբական




թթու ստանում են յերկու միջոցով՝ կոնտակտային և կամերային:

Կոնտակտային յեղանակը—այս յեղանակի մասին մենք խոսեցինք արդմն SO_3 ստանալու ժամանակ։ SO_3 -ը ծծմբական թթվի վերածելու համար անց են կացնում վոչ թե ջրի, այլ $96\text{--}98\%$ ծծմբական թթվի միջով, վերջինս ընդունակ և ավելի լավ կանելու SO_3 -ը, քան ջուրը։ Այս գեղքում ստացած ծխացող ծծմբական թթուն նոսրացնում են ջրով և ստանում ցանկացած խտությամբ ծծմբական թթու։

Կամերային յեղանակը—կամերային յեղանակն ավելի հին եւ կայանում են նրանում, վոր SO_3 -ը աղոտական թթվի աղցեցությամբ ռքսիդանում եւ և վերածվում SO_3 -ի, այս վերջինս ջրի հետ միանալով տալիս ե ծծմբական թթու։



Գոյացած աղոտօքսիդը ջրի և ողի ներկայությամբ ռքսիդանալով դառնում ե աղոտական թթու։



Ինչպես տեսնում ենք ծախսված յերկու մոլ աղոտական թթուն հետ ե ստացվում ու նորից մտնում ունակցիայի մեջ։ Այստեղ աղոտական թթուն նույնպես կատալիզատորի դեր է կատարում։

Կամերային յեղանակով H_2SO_4 ստանալու համար անհրաժեշտ նյութերը հանդիսանում են՝ SO_2 , թթվածին, ջրի գոլորշի և HNO_3 ։

SO_2 -ը ստացվում է պիրիտի այրումից։


Թթվածին ստացվում է կամերայի մեջ բաց թողներով ող։

Ջրային գոլորշիներ ստացվում ե շոգեկաթսայից։



Աղոտական թթուն ստացվում է $\text{NaNO}_3 + \text{H}_2\text{SO}_4$ -ից, Այս վերջին խառնուրդը հատուկ ամաններով դնում են կամերայի մեջ, վորտեղ մտնում են SO_2 , O և H_2O ։

Ստացված ծծմբական թթուն հավաքվում է կամերայի հատակին։ Վերցրած նյութերից ամենաքիչավորն աղոտական թթուն ե, ուստի հարկավոր ե այս վերջինիս կորուսաը հասցնել մինիմումի։ Սրա համար կամերաններից անմիջապես հետո կառուցված և Գեյլյուսակի աշտարակը, (տես գծագիր № 49) վորը կլանում ե աղոտի ռքսիդների վերջին հետքերը և թույլ չի տալիս այդ նյութերն անցնեն ողի մեջ։ Այս աշտարակն ունի 15 մետր բարձրություն և լցված է կոքսի կտորներով։ Աշտա-

րակի վերեկից թափվում է թունդ ծծմբական թթու, իսկ ներքեկից վեր բարձրանում են դագերը։ Աղոտի ռքսիդները լուծվելով ծծմբական թթվի մեջ գոյացնում են նիտրոգիլ ծծմբական թթու։



Նիտրոզիլ ծծմբական թթուն հնչված ողի ոգնությամբ բարձրանում է յերկրորդ աշտարակի (Φ լովերյան աշտարակի) վրա, վորտեղ նրան խառնում են նոսր ծծմբական թթու և կրկին թափում են վերեկից ներքեւ։ Նիտրոզիլ ծծմբական թթուն հանդիպելով պիրիտ այրող վառարաններից յեկող տաք դագերին, տարրաւուծվում ե, տալով ծծմբական թթու և աղոտի ռքսիդներ։



ԳՀԱՐԳԻՐ 52.

(A_1 , A_2 , A_3 և A_4) պիրիտ այրող վառարաններ. C . SO_2 -ը փոշուց մաքրող կամերա. g . Գլովերյան աշտարակ. K_1 , K_2 և K_3 . կապարյա կամերաներ ցլ. Գեյլյուսակի աշտարակ 1. ողը գեպի կամերաներ տանող խողովակներ ծ. Ջրային գոլորշիներ դեպի

կամերաները տանող խողվակներ Բ. քծմբական թթու տանող խողվակ Ե. նիտրոզիլ ծծմբական թթուն տանող խողվակ:


Հարկավոր և արդյունաբերությունը կազմակերպել այնպես, վորակագի կամերաներում H_2SO_4 -ի խառնվյունը կամ ինչպես առաջանական էներգիային թթվի խառնվյունը լինի $60^{\circ}/_{\text{o}}$ ից վոչ պակաս և $70^{\circ}/_{\text{o}}$ ից վոչ ավել կամերային թթուն խտացնում են կապարյա չաներում մինչև $77^{\circ}/_{\text{o}}$:

Սուպերֆուսիատ ստանալու համար ուղղակի գործ են ածում կամերային թթուն: Ավելի խիտ ծծմբական թթու ստանալու համար, պլատինյա կամ ձենապական թասերում զորոշացնում են $77^{\circ}/_{\text{o}}$ անի ծծմբական թթուն մինչև $93,5^{\circ}/_{\text{o}}$, վորակում և անգիտական ծծմբական թթու կամ արջապի յուր Մաքուր $100^{\circ}/_{\text{o}}$ անի H_2SO_4 -ի տեսակարար կշիռն $1,85$ և $+10,5^{\circ} \text{C}$ -ում բյուրեղանում և, յեռում $+330^{\circ} \text{C}$ անջատելով SO_3 , մինչև կհասնի $98,33^{\circ}/_{\text{o}}$: Այս վերջինս յեռում $+338^{\circ} \text{C}$ -ում: Ծծմբական թթուն ողից կլանում և խոնավություն և սրա համար ել նրան գործ են ածում վորակս խոնավածում նյառթ: Զրի հետ խառնվելիս անջատում է բավական մեծ քանակությամբ ջերմություն, վորի համար ել ծծմբական թթուն նոսրացնելու նպատակով վոչ թե պիտք և չուրը լցնել նրա վրա, այլ ընդհակառակն: Ծծմբական թթուն իր թթու հատկությունը ցույց է տալիս միմիայն նոսրացած դրությամբ, այսինքն, յերբ նա յենթաքի վում և իոնիզացիայի: Այս իսկ պատճառով ել թունդ ծծմբական թթուն չի ազդում մետաղների վրա և նրան կարելի յե պահել յերկաթյա անոթներում: Ծծմբական թթվի նոսրացած լուծույթն ազդում և մետաղների վրա անջատելով ջրածին: Աս վորակս յերկիմն թթու մետաղների հետ տալիս և թթու և չեղոք աղ, որինակ՝ $NaHSO_4$, Na_2SO_4 :

Տաք H_2SO_4 -ը ածուխի, փոսփորի, ծծմբի և մարսենի ներկայությամբ տարրալուծվում և անջատելով SO_2 : Ծծմբական թթուն միանալով H_2S -ի հետ անջատում և ծծումբը, $H_2SO_4 + 3H_2S = 4H_2O + 4S$. այս իսկ պատճառով H_2S -ը չի կարելի չորացնել իունդ ծծմբական թթվի ոգնությամբ: Մանր մետաղների սուլֆատները ատքացնելիս հեշտությամբ տարրալուծվում են: Աղկամական և հողակալիքական մետաղների սուլֆատները կայուն են, տաքացնելիս նրանք չեն տարրալուծվում:

Ծծմբական թթուն տեխնիկակում և արդյունաբերության


մեջ խողում և բավական կարևոր դեր: Ներկայումս ծծմբական թթվի տարրեկան արդյունաբերությունը հասնում է 12 միլիոն թթվի տարրեկան արդյունաբերությունը հասնում է 12 միլիոն տոննի: Ծծմբական թթուն մեծ քանակությամբ գործ են տիրունական արդյունաբերություններում:




ծում սուպերֆոսֆատ և ամոնիում սուլֆատ ստանալու համար. Նրանք միջոցով ստանում են շատ թթուներ և աղեր, որդանական և միեներալական ներկեր, պայթուցիկ նյութեր: Ծծմբական թթուն խոշոր կիրառություն ունի նավթի արդյունաբերության մեջ, բնագին և այլ նյութեր զտելու համար: Մեղ մոտ, Խորհրդային Միության մեջ՝ հնգամյա պլանի համաձայն ծծմբական թթվի արտադրությունը նախատեսնված է հնգամյակի վերջում հասցնել 3800 հազար տոննի: Այս պլանի կատարման համար կառուցվում են մի շաքր նոր գործարաններ և ընդլայնացվում հները, գլխավորապես կամերային յեղանակով արտադրող: Այս նպատակին հատկացված է 270 միլիոն ռուբլի:

Ստորև բերված սխեման ցույց է տալիս, թե վորտեղ և ինչու համար են գործածում ծծմբական թթուն:


Ծծմբաջրածին.—բնության մեջ ծծմբաջրածինը գտնվում է հրաբխային գազերում. գոյանում և ծծումը պարունակող որդանական միացությունների նեխումից: Ծծմբաջրածին կարելի յե ստանալ ծծումի և ջրածնի անմիջական միացումից (տես առաջադրություն № 2): Սովորաբար լարորատորիայում ծծմբաջրածինը ստանում են յերկաթսուլֆիդի վրա աղբելով ծծմբական թթու կամ աղաթթու:



Ծծմբաջրածինն անգույն, բնորոշ հոսով գազ է. տեսակարար կշեռը 1,18. Նա ողում այրվելով գոյացնում է ջուր և ծծումբդիոքսիդ:



Կարմիր շիկացման դեպքում H_2S -ը տարրալուծվում է ջրածնի և ծծմբի. H_2S -ը ուժեղ վերականգնվող միացություն է. հայոցիները գազ H_2S -ը կամ նրա ջրային լուծույթը հեշտությամբ տարրալուծում են:





Ծծմբաջրածինը միանալով ծծումբդիոքսիդի հետ տալիս է ջուր և ծծումբ:



Ծծմբաջրածինը լավ լուծվում է ջրի մեջ (սովորական ջերմաստիճանում մեկ ժամանակ ջրի մեջ լուծվում է մոտավորապես 3 ժամանակակից H_2S) և ջրին տալիս է թթու հատկություն. ծծմբաջրածնի լուծույթը կոչվում է ծծմբաջրածին ջուր կամ ծը-

ծմբաջրածին թթու: Այս վերջինիս աղերը կոչվում են սուլֆիդների Ծանր մետաղների սուլֆիդները բնության մեջ շատ տարածված են. ծանր մետաղների հանքները մեծ մասամբ հանդես են գալիս սուլֆիդների տեսքով:

Ծծմբաջրածնի լուծույթը ողի աղդեցության տակ շնորհիվ նրա ողի բթվածնի հետ միանալու ընդունակության, պղտորվում է.



Այս սեակցիայից ոդտվում են յոդմածնական թթու ստանալու համար: Բոլոր այս սեակցիաները ցույց են տալիս, վործմբի և ջրածնի միջև կապը թույլ են:

ՍԵԼԵՆ ՅԵՎ ՏԵԼՈՒԹՅՈՒՆ

Այս ելեմենտներն իրենց քիմիական հատկությունով շատ մոտ են ծծմբին:

Սելեն—սելենը ծծումբի հետ միասին գտնվում է ծծմբային հանքերում: Կամերային յեղանակով ծծմբական թթու ըստանալու ժամանակ սելենը դոյցանում է SeO_2 , վորը հավաքվում է կամերային տիղմի մեջ: Ծծմբի նման սելենը նույնպես միքանի ալոտրոպ դրությամբ և հանդես գալիս՝ 1) ամորֆ-սելեն—մուգ կարմբավուն փոշի, տեսակարար կշիռը 4,3. 2) բյուրեղային սելեն—սև մոխրագույն, մետաղական փայլով, տեսակարար կշիռը 4,8:

Սելենն ողում այրվելով տալիս է սելենիոքսիդ՝ կամ սելենացին անհիդրետ՝ SeO_2 -ը ողից խելով խօնավություն վերածվում է սելենացին թթվի (H_2SeO_3): Այս վերջինն հեղառությամբ ստացվում է, յերբ նոսրացրած HNO_3 -ով աղդում ենք սելենի վրա: H_2SeO_3 -ը յերկիմն թթու յե, մետաղների հետ նա տալիս է թթու և չեղոք աղը H_2SeO_3 -ը ոքսիդացրած վերածվում է սելենացին թթվի (H_2SeO_4): H_2SeO_4 -ը իր հատկություններով շատ նմանվում է ծծմբական թթվին BaSeO_4 -ը, BaSO_4 -ի նման չի լուծվում ջրի մեջ:

Սելենը ջրածնի հետ տալիս է սելեն ջրածին (H_2Se), վորն անդուր հոտով, թունավոր գազ է, լուծվում է ջրի մեջ և ջրին տալիս թթու հատկություն: H_2Se -ի ջրային լուծույթն ոդում տալիս թթու հատկություն: H_2Se -ի ջրային լուծույթն ոդում տալիս թթու հատկություն: H_2Se -ի ջրային լուծույթն ոդում տալիս թթու հատկություն: H_2Se -ի պարագանակով անջատում է ամորֆ կարմիր սելեն, H_2Se -ն աղերվածիանալով անջատում է ամորֆ կարմիր սելեն:

Հեշտությամբ և ե տարբալուծվում, քան H_2S -ը, H_2Se -ը, H_2Te -ի նման նույնպես այրվում ե ողում:

Տելլութ-տելլութը իր արտաքին տեսքով նմանվում է մետաղներին ելեկտրականության հաղորդիչ և, բնության մեջ աղատ գրությամբ շատ հազվագյուտ ե պատճեռմ. նա մեծ մասմբ լինում ե ինչպես՝ $PbTe$, $Bi_2Te_3 + Bi_2O_3$ և այլն: Տելլութը ստանալու համար հանքը յեռացնում են ծծմբական թթվի հետ և SO_2 -ով յենթարկում են ոճղուկցիայի: Տելլութը մետաղների հետ տալիս ե ջրի մեջ լուծվող տելլութի գներ. որինակ՝ K_2Te , Na_2Te : Աղում այլպես տալիս ե տելլութ-դիոքսիդ (TeO_2): Աղուտական թթվի հետ տալիս ե ջրում գժվար լուծվող տելլութային թթու (H_2TeO_3), վորն ոքսիդանալով վեր և ածխում տելլութական թթվի (H_2TeO_4), վերջինո ցուցանանում է հիմնային հատկություն, տաքացնելիս անջատում է TeO_3 :

Տելլութը ջրածնի հետ տալիս ե՝ տելլութ ջրածն (H_2Te), վորն անգուր հոտով թունավոր գազ և, լուծվում է ջրի մեջ: Տելլութ-ջրածնի ջրային լուծույթը հեշտությամբ տարրալուծվում է անջատելով տելլութ:

ԹԹՎԱԾՆԻ ԽՄԲԻ ԵԼԵՄԵՆՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Այս խմբի ելեմենտները բոլորն ել շատ թե քիչ չափով ցուցանանում են մետալյիդական հատկությունն: Բացառությամբ թթվածնի, նրանք բոլորն ել միանալով ջրածնի հետ տալիս են գաղային միացություններ՝ թույլ թթու հատկությամբ: Նրանք ջրածնային միացություններում հանդես են գալիս յերկու արժեքական: Ելեմենտների ատոմական կշռի աճումով, աճում են նաև նրանց տեսակարար կշռը, բարձրանում և հալման և յեռման աստիճանները, ինչպես և ուժեղանում ե նրանց մետաղական թթույթը: Այս խմբի ելեմենտներից թթվածինն ու ծծումըն ունեն ավելի շատ մետալյիդական հատկություն, քան սելինը և տելլութը: Ստորև բերված աղյուսակները ցույց են տալիս այս ելեմենտների ֆիզիքական և քիմիական համեմատական հատկությունները:

ԱՂՅՈՒՍԱԿ XIX

ԹԹՎԱԾՆԻ ԽՄԲԻ ԵԼԵՄԵՆՏՆԵՐԻ ԳԻԶԻՔԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

	O	S	Se	Te
Մետաղներ կշռ	16	32,07	79,2	127,5
Վիճակը սովորական բարելիսառնության տակ	Գաղ	Կապտավուն	Կարմիր, սև, մոխրագույն	Սպիտակ մետաղների մոխրագույն փոշի
Գույնը սովորական բարելիսառնության տակ	Կապտավուն	Գեղին	Կարմիր, սև, մոխրագույն	Սպիտակ մետաղների մոխրագույն փոշի
Տելլութը կշռ	1,12 (հեղուկ)	1,96—2,07	4,26—4,8	6,1—6,28
Ցեման աստիճան	—183°	444,5°	688°	1390°
Հալման աստիճան	—218,4°	112,8—118,95	220,2°	452,5°

ԱՂՅՈՒՍԱԿ XX

ԹԹՎԱԾՆԻ ԽՄԲԻ ԵԼԵΜԵՆՏՆԵՐԻ ԳԻՄԻԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

	O	S	Se	Te
Մետալյիդական հատկությունների փոխանցումը մետաղականի	Մետալյիդ			Մետաղ
Ջրածնավոր միացություններ (երկու արժեքական)	H_2O	H_2S	H_2Se	H_2Te
Ջրածնավոր միացությունների գոյացման գերմություններ	+68,4 Cal	+2,7 Cal	—25,1 Cal	—34,9 Cal
Չորս արժեքական սքսիդներ	SO_2 անգույն գաղ	Կարծր շուալ ցնող	SeO_2 կարծր շուալ ցնող	TeO_2 կարծր ավելի գերիշտական
Նրանց թթուներ (հիդրագներ)	—	H_2SO_3	H_2SeO_3	H_2TeO_3
Վեց արժեքական սքսիդներ	—	SO_3	SeO_3	TeO_3
Նրանց թթուներ (հիդրագներ)	—	H_2SO_4	H_2SeO_4	H_2TeO_4
	ուժեղ թթու		թթվածն թթու	

ՓՈՐՁԵՐ ԹՈՒՆԴ ԾԾՄԲԱԿԱՆ ԹԹՎՀԻ ՀԵՏ

I. Կամերային յեղանակով ծծմբական թթու կարելի յե ստանալ սոլյորական Երևան-Մելեռի կոլրայում: Կոլրայի մեջ լցրեք մի քիչ ջուր և տաքացրեք մինչև յեռալը, այսպես վոր կոլրան ամբողջովին լցվի ջրի գոլորշիներով, ապա կոլրան հեռացրեք կորակից. յերկաթյա շերեփի մեջ այլեցեք ծծումբը և իջեցրեք կոլրայի մեջ, հետո ապակյա ձողի միջոցով մի կաթիլ թունդ HNO_3 մտցրեք կոլրայի մթնոլորտում, վորտեղ արդեն ունեյինք SO_2 , H_2O և օխառնուրդ—շուտով ապակյա ձողի շուրջ գոյանում և մուգ կարմրագուն ամպ, այնուհետև թափահարեցեք ջուրը և կոլրայի մեջ ավելացրեք մի քանի կաթիլ BaCl_2 -ի լուծույթ, զույնում և սպիտակ նստվածք, վորը պարզ ցույց ե տալիս ծծմբական թթվի ներկայությունը:

II. Զգարանում գոլորշիացրեք թունդ ծծմբական թթու, այս աշխատանքի ընթացքում անջատվում է սպիտակ գոլորշի: H_2SO_4 -ը տարբալուծվում է SO_3 -ի և ջրի:

III. Փորձանոթի մեջ լցրեք 1 cm^3 թունդ ծծմբական թթու և իջեցրեք մի փալոյա յերկար բարակ ձող: Յելուզոն ունի $\text{C}_8\text{H}_{10}\text{O}_5$ բանաձև, յեթե ծծմբական թթուն ցելուզից խվի ամբողջ ջուրը, անոթի մեջ ինչ կմնա, գրեցեք հավասարումը:

IV. Շաքարի փորմուլան է $\text{C}_{12}\text{H}_{22}\text{O}_{11}$. Ի՞նչ կմնա շաքարից, յեթե աղդեկու լինեք նրա վրա թունդ ծծմբական թթվով. գրեցեք հավասարումը:

V. Ամբողջովին չոր փորձանոթի մեջ լցրեք 1 cm^3 թունդ ծծմբական թթու և դցեցեք նրա մեջ ցինկի մի փոքրիկ կտոր. ժեմեղ և զնում ունակցիան, ավելացրեք մինչև 4 cm^3 ջուր, ի՞նչ եք նկատում, բացատրեցեք պատճառը:

ՓՈՐՁԵՐ ՆՈՍՐԱՑՐԱԾ ԾԾՄԲԱԿԱՆ ԹԹՎՀԻ ՀԵՏ


I. Փորձանոթի մեջ լցրեք—3 cm^3 ջուր, ապա ջրի վրա ավելացրեք նույնքան թունդ ծծմբական թթու. ներքեմ մասը բռնեցեք ափով. ի՞նչ եք զգում, ի՞նչ մու:

II. SO_4 իոնը հայտնաբերելու համար BaCl_2 -ի, $\text{Ba}(\text{OH})_2$ -ի և $\text{Pb}(\text{CH}_3\text{COO})_2$ -ի մեկական խորանարդ սանտիմետր լուծույթի վրա ավելացրեք քիչ նոսրացած ծծմբական թթու. կստանաք սպիտակ նստվածք. գրեցեք հավասարումը:

ՓՈՐՁԵՐ ԾԾՄԲԱԿԱՆ ԹԹՎՀԻ ՀԵՏ


I. SO_2 գազը ստացեք պղնձի վրա աղեղով թունդ ծծմբական թթու. ստացած գազը անցկացրեք ջրի մեջ. ի՞նչ թթու յե ստացվում: գրեցեք հավասարումը:

II. 2 cm^3 ծծմբային թթվի վրա ավելացրեք մի կաթիլ կալիում պերման գանատի լուծույթ, այս վերջինիս գույնը կորչում է, վորովհետև KMnO_4 -ը վերածվում է MnSO_4 -ի:



Այս խառնուրդի վորոշ մասի վրա ավելացրեք BaCl_2 -ի լուծույթ, կստանաք սպիտակ նստվածք. ավելացրեք աղաթթու, նստվածքը լուծվում է. այս փորձը ի՞նչ ե ցույց տալիս:

III. 2 cm^3 ծծմբային թթվի վրա ավելացրեք 1 cm^3 կալիում-քրոմատի ($\text{K}_2\text{Cr}_2\text{O}_7$) լուծույթ և թափահարեցրեք. լուծույթը կանաչում է $\text{K}_2\text{Cr}_2\text{O}_7$ -ը վերածվում է $\text{Cr}_2(\text{SO}_4)_3$ -ի:



Ի՞նչ նստվածք կստացվի, յեթե ավելացնեք BaCl_2 -ի լուծույթ. գրեցեք հավասարումը:

IV. Լուծեցրեք ջրի մեջ մոտավորապես 0,2 գրամ Na_2SO_3 կամ K_2SO_3 և լուծույթը փորձեցեք կարմիր լակմուսով. ի՞նչո՞ւ յե կարմիր լակմուսը կապտում: Na_2SO_3 լուծույթի վրա ավելացրեք BaCl_2 -ի լուծույթ. գրեցեք հավասարումը. նստվածքի վրա ավելացրեք HCl , ի՞նչով ե SO_3 իոնը տարբերվում SO_4 իոնից:

ՓՈՐՁԵՐ ԾԾՄԲԱԿԱՆ ԹԹՎՀԻ ՀԵՏ

I. Պատրաստեցեք ծծմբաջրածնական ջուր. այս ջուրը ի՞նչ հատկություն ունի և ի՞նչով կարող եք վորոշել:

II. 3 cm^3 ծծմբաջրածնական ջրի վրա ավելացրեք նույն քանակությամբ HSO_4 -ի լուծույթ. ի՞նչ եք ստանում. գրեցեք հավասարումը:

III. Փորձանոթի մեջ լցրեք ծծմբաջրածնական ջուր և $\text{Pb}(\text{CH}_3\text{COO})_2$ -ի լուծույթով թրջված ֆիլտր թղթով ծածկեցրեք երրանը. ի՞նչ եք նկատում. գրեցեք հավասարումը:

IV. Հինգ փորձանոթի մեջ լցրեք յերկական խորանարդ սանտիմետր ծծմբաջրածնական ջուր և ամեն մեկի վրա ավելացրեք 1 cm^3 HCl -ի նոսրացած լուծույթ. հետո առաջին փորձանոթի մեջ ավելացրեք $\text{Pb}(\text{CH}_3\text{COO})_2$ -ի լուծույթ, յերկրորդին CuSO_4 -ի, յերրորդին CdCl_2 -ի, չորրորդին FeSO_4 -ի և հինգերոր-

դին ZnSO_4 -ի: Ինչու առաջին յերեք փորձանոթում ստացվում է դիստվածք. Բնչ պետք է անել, վորպեսզի մնացած յերկու փորձանոթներում ել նույնպես նստվածք ստացվի:

V. Ծծմբաջրածնական թթուն յերկնիմ թթու յե. գրեցեք գոյացած թթու և չեղոք աղերի հավասարումը, յեթե H_2S -ի չեղոքացումը կատարում եք նատրիում-հիդրօքսիդի միջոցավ: Բնչ տեղի կունենա յեթե նատրիում-սուլֆիտի վրա ավելացնեք աղաթթու:

VI. Ստացեք ծծմբաջրածնական գաղ և այրեցեք. Բնչ գույնի բոցով և այրվում, այրվող H_2S -ի բոցի վրա պահեցեք մի սպիտակ սառը մարմին. Բնչ եք նկատում գրեցեք հավասարումը սպիտակ սառը:

ԱՇԽԱԾՆԻ ԽՄԲԻ ԵԼԵՄԵՆՏՆԵՐԸ

Ածխածնի խմբի մեջ մասնում են՝ ածխածինը, սիլիցիումը և անագը և կապարը:


ԱՇԽԱԾԻՆԻ.

Ածխածնի մասին արդեն ասված և առաջադրություն № 2-ում:


ԱՇԽԱԾՆԻ ԹԹՎԱԾՆԱՎՈՐ ՄԻԱՅՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ածխածնի միանալով թթվածնի հետ տալիս են՝ ածխածնոքսիդ (CO) և ածխագլոքսիդ (CO_2):


Ածխածնոքսիդը թերի այրվելու դեպքում տալիս է ածխամոնոքսիդ:



Լաբորատորիայում ածխամոնոքսիդ ստանում են մըջնաթթվի, և թունդ ծծմբական թթվի խառնուրդը տաքացնելով մինչև 100°:



Ածխամոնոքսիդը անգույն, անհոտ, անհամ, թունավոր գաղ և տեսակարար կշիռը 0,967, չի նպաստում այրմանը, իսկ ինքն այրվում է առաջացնելով ածխաղիոքսիդ:



Ածխամոնոքսիդի և թթվածնի խառնուրդը կայծի աղցեցությամբ պայթում է: Ածխամոնոքսիդը ջրի մեջ շատ քիչ է լուծվում, աղելի լավ լուծվում է սպիտակ մեջ:

Ածխամոնոքսիդի և ջրային գոլորշների խառնուրդը 400°:

Ըստ միանում են կալցիում-սքսիդի հետ և տալիս կալցիում կարբոնատ:



Արևի ճառագայթների աղբեցությամբ քլորը միանալով ածխամոնոքսիդի հետ, տալիս է կարբոնի լոքունը (Փոստ են): Բարձր ջերմաստիճանում մետաղների ոքսիդներից, ածխամոնոքսիդը խլորմ է թթվածնը և վերականգնում մետաղները:

Ածխագլոքսիդ.—ածխաղիոքսիդ կա ողում, հրաբխային վայրերում, ջրի մեջ լուծված հանդես և գալիս վորպես «թթու» աղբյուղներ, իսկ կապված զրությամբ գանվում է կարբոնատներում, ինչպես որինակ՝ CaCO_3 (կրաքար, մարմար, կավիճ), գոլոմիտում (CaCO_3 , MgCO_3) և այլն:


Ածխաղիոքսիդը ստացվում է ածխածինն ողում լրիվ այրվելիս, կարբոնատները տաքացնելիս ($\text{CaCO}_3 = \text{CaO} + \text{CO}_2$), CO_2 -ի միջոցով բոլոր մետաղների ոքսիդները ուղղուեցնելիս ($\text{CuO} + \text{CO} = \text{Cu} + \text{CO}_2$), նմանապես շաքարի խմորումից:

Լաբորատորիայում ածխաղիոքսիդ ստանում էն կրաքարի վրա աղդելով մի վորեկցիե թթու:



Ածխաղիոքսիդի հատկությունների մասին տես յերկրորդ առաջաղործությունում:

Ալէալիսական մետաղների հիդրօքսիդների հետ ածխաղիոքսիդը տալիս է ջրում լուծվող կարբոնատներ:



Ջրի հետ միանալով տալիս է ածխաթթու, վորն յերկնիմ թթու յե:





Ածխաթթուն շատ թույլ թթու յե, այսինքն նա շատ անշան չափով է յեթարկվում ինիդացիայի: Ածխաթթու գոյություն ունի միմիայն ջրային թույլ լուծույթներում, բայց ընության մեջ շատ տարածված է նրա. Կալցիումի աղը: Կրաքարը, մարմարը, կավիճը, զոլոսիտը սրանք բոլորն ել ածխաթթվի աղերն են: Ածխաթթուն վորպես յերկնիմ թթու, տալիս է գործուական աղ՝ թթու և չեղոք. որինակ՝ NaHCO_3 , և Na_2CO_3 : $\text{Ca}(\text{HCO}_3)_2$ և CaCO_3 :

Ածխաթթվի թթու աղերը կամ թթու կարբոնատները կոչվում են նաև բիկարբոնատներ:



Ալկալիական մետաղների կարբոնատների բացառությամբ, մնացած բոլորը չեն լուծվում ջրի մեջ: Բիկարբոնատները, որինակ, $\text{Ca}(\text{HCO}_3)_2$ -ը լուծվում է ջրում: Առժեղ թթուները տարրայուծում են կարբոնատներն անջատելով նրանցից CO_2 գազը:



Կարբոնատներն ածխաթթվի հետ միանալով, տունց անջատելու CO_2 գազ, տալիս են բիկարբոնատ:




Բնության մեջ չեղոք կարբոնատների նման փոխակերպումը բիկարբոնատների՝ տեղի յեւ ունենում այն դեպքում, յերբ թթու ջրերն անցնում են կարբոնատների շերտերի միջով և նրանց վերածում բիկարբոնատի: Յերբ այս աղբյուրները դուրս են գալիք գետնի մակերեսը CO_2 գազը ճնշումից ազատվելով անջատվում ե և բիկարբոնատը փոխարկվում է չեղոք կարբոնատի, վորը ջրի մեջ չլուծվելու պատճառով նստվածք ե գոյացնում: Ծ ծ մ բ ա ծ ի ա ծ ի ն .—(տես առաջադրություն Հ 2):

Ծծմբածխածինն ողում այրվում է կանաչավուն բոցով, գոյացնելով ածխադիրքսիդ և ծծումբիոքսիդ:



CS_2 -ը CO_2 -ի նման միանալով ծծմբի հետ տալիս է CS_3 իրն, վորի աղերը կոչվում են տիո կամ սուլֆոկարբոնատներ. այսպիս որինակ՝ CS_2 -ը միանալով ծծմբային մետաղների հետ տալիս ե լուծելի տիոաղեր:




Աղաթթվի կամ ծծմբական թթվի աղբեցությամբ տիոաղերը տալիս են անկայուն միացություն տիոթթու H_2CS_3 :

Ցիան և ցիանջրածնական թթվի աղբեցությամբ տիոաղերը տալիս են անկայուն միացում և ածխածինի հետ և տալիս ցիան-(CN)₂-ցիանը անգույն, սուր հոտով թունավոր գազ ե. նա հեղությամբ վեր և ածվում հեղուկի: Ցիանն իր հատկություններով շատ նմանվում է հալոգեններին:

Ցիանը ջրածնի հետ միանալով տալիս է HCN հեշտ ցնդող, անգույն և ուժեղ թունավոր հեղուկ, նրա SO_2 միլիգրամը մի քանի վարկյանի ընթացքում արգեն մահացու յեւ մարդու համար: Ցիանական թթվի հող, ալկալիական և ալկալիֆական մետաղների աղերը՝ ցիանիդները լուծվում են ջրի մեջ: Ծանր մետաղնե-


րի ցիանիդների մեծամասնությունը գելվար են լուծվում: Ցիանիդները առաջ են կոմպլեքս իոններ. որինակ՝ $\text{K}_4\text{Fe}(\text{CN})_6$, $\text{K}_3\text{Fe}(\text{CN})_6$:

Կ ա ր բ ի գ ն ե ր .—Եկանատների միացությունն ածխածնի հետ կոչվում է կարբիդ, բայց սովորաբար կարբիդ ասելով հասկացվում է մետաղների, ինչպես նաև բորի ու սիլիցիտումի միացությունը ածխածնի հետ կարբիդները գոյանում են ոքսիդներն ածխածնի հետ շիկացնելիս, վորի ժամանակ ածխածինն ոքսիդներից խլում և թթվածինը և ինքը միանում ոքսիդների հետ որինակ՝



Շատ բարձր ջիրմաստիճանում կարբիդները տարրալուծվում են իրենց բաղադրիչ մասերի, այն ե՝ մետաղի և ածխածնի: Այժմ կարբիդներից գործարանային մասշտաբով բավականի մեծ քանակությամբ պատրաստում են կալցիում կարբիդը*):

Ս ի լ ի ց ի ու մ . կ ա ր բ ի դ .—սիլիցիում կարբիդը (կարբունիկ) ստանում են կվարցի և կրոսի խառնուրդը եկեկտրական վատարաններում մինչև 2000° շիկացնելու միջոցով:




2000° ը-ից բարձր տաքացնելիս սիլիցիում կարբիդը տարրալուծվում է. սիլիցիումը ցնդում, իսկ ածխածինը մնում է վորպես գրաֆիտ: Մաքուր սիլիցիում-կարբիդն անգույն, բյուրեղացին չուութ ե, տեսակաբար կշիռը 3,2 իր կարծրությամբ կանգնած և այլամաստից հետո: Սիլիցիում-կարբիդը քիմիական հատկությամբ շատ կայտն միացություն ե, վոչ բլորը և վոչ ել ծխացող HNO_3 -ի ու HF -ի խառնուրդը չեն ազդում սիլիցիում-կարբիդի վրա, բայց նրա և կծուների խառնուրդն ողի ներկայությամբ հալելիս հեշտությամբ տարրալուծվում ե:




Բ ո ր կ ա ր բ ի դ .—բորկարբիդը ստացվում բորը կամ բորտիոքսիդն ածիքի հետ եկեկտրական վատարաններում շիկացնելով: Բորկարբիդի կարծրությունն այնքան մեծ է, վոր նրանով նույնիսկ կարելի յեւ ալմաստը հղկիր: Բորկարբիդը, սիլիցիում-կարբիդի նման ցույց է տալիս քիմիական կայունություն:

Թեթև մետաղների կարբիտները տարրալուծում են ջուրը սոսրի բերված ռեակցիայի համաձայն:




*): Մեղ մատ, Ցերեանում կա կալիւում կարբիդի գործարան.

Ստորև բերված սխեման ցույց է տալիս, թե վորտեղ և ինչու համար են գործածում ածխաթթուն (CO_2) ու կալցիում՝ ոքսիդը:




Սիլիցիում


Սիլիցիումը կազմում է յերկրագնդի կեղեկ 27% և այսպիսով իր քանակով սիլիցիումը հետ և մոտև միմիայն թթվածնից: Բնության մեջ սիլիցիումը հանդես է գալիս միմիայն միացություններում՝ կամ վորպես սիլիցիում-պիրոքսին (SiO₂) և կամ սիլիկատ: Սիլիցիումը ստանում են SO_2 -ի և մաղնեղիումի խառնուրդը շիկացնելով:




Այս ռեակցիայի ընթացքում՝ սիլիցիումը միանում է մագնիսիումի հետ և տալիս Mg_2Si , յերբ վերջինս մշակում են թթվով՝ մագնեղիումը լուծվում է, իսկ սիլիցիումը մնում է վորպես ամորֆ փոշի: Բյուրեղային սիլիցիումը ստանալու համար, ամորֆ սիլիցիումը ցինկի հետ ձուլում են, ապա վերջինս հեռացնում թթվի ոգնությամբ: Ինչպես տեսնում ենք, սիլիցիումը հայտնի յերկու ալուրով դրությամբ՝ ամորֆ և բյուրեղային: Սիլիցիումի տեսակաբար կշիռն է 2,35—2,5 համան աստիճանը 1500°C : Նա միանում է ինչպես մետաղների, նույնպես ել մետալոիդների և տալիս է սիլիցիում-պիրոքսին: Որինակ Ca_2Si , Fe_2Si , SiCl_4 , SiF_4 և այլն: Սիլիցիումն ածխածնի նման միանում է ջրածնի հետ նրա ջրածնավոր միացությունները կոչվում են սիլաններ, վորոնք ունեն SiH_4 + 2 ընդհանուր ֆորմուլա: $\text{Mg}_2\text{Si}-ի$ վրա ազդելով տաքք լուր-ջրածնական թթու, ստացվում է մի շարք սիլաններ, վորոնքից SiH_4 և Si_2H_6 գաղ են, Si_3H_8 — Si_6H_{14} հեղուկ են:



Սիլիցիումը հալոգենների հետ տալիս է մի շարք միացություններ դրանցից SiF_4 -ը ստացվում է ուղղակի ֆլուորի և սիլիցիումի փոխադրեցությունից: SiCl_4 -ը ստացվում է, յերբ շիկացած SiO_2 -ի և C -ի վրա բաց թողնենք քլորի հոսանքը:



SiCl_4 -ը 59°C -ում հեղուկ է, ողում ուժեղ ծիում է և ջրի հետ տալիս է հետևյալ ռեակցիան:




Թթուներից միմիայն ֆլուորջրածնական թթուն է, վորոնքը ազդելով է SiO_2 -ի վրա և տաքքալուծում նրան:



SiF_4 գաղ է և ջուրը նրան հեշտությամբ տաքքալուծում է:




Սակայն SiF_4 -ի ավելցուկը HF -ի հետ տալիս և սիլիցիումը քլորջրածնական թթու:




Այս թթուն հետաքրքիր ենրանով, վոր կալիումի և նատրիումի աղերը՝ K_2SiF_6 և Na_2SiF_6 դժվարությամբ են լուծվում ջրի մեջ, այն պարագային յերբ ճանք մետաղների մեծամասնությամբ աղերը հեշտությամբ են լուծվում:

SiO_2 -ը որթոսիլիցումակառ թթվի (H_4SiO_4) անհիդրիդն և հանդիսանում:





Այս թթուն ազատ զրությամբ հայտնի չէ, բայց հայտնի յեն նրա աղերը: Այս թթուն հեշտությամբ կարցնելով ջուրը վերածվում է մետասիլիցումական թթվի (H_2SiO_3): Ածխածնի միացությունների նման սիլիկաթթուն նույնպես կապվում են իրար հետ գոյացնելով շղթա: որինակ՝ յերկու թթու միմիանց հետ միանալով անջատում են ջուրը և գոյացնում դիօիլիցիում թթու:



Յերեք մոլ Si(OH)_4 թթվի միացման դեղքում ստացվում և որի հիլիցումական թթու և այլն:

Այս թթվի աղերից (սիլիկատներից) ջրի մեջ լուծվում են միմիայն կալիում և նատրիում սիլիկատները (K_4SiO_4 , Na_4SiO_4): Այս վերջիններս ստանալու համար SiO_2 -ը հալում են KOH -ի կամ NaOH -ի հետ:



Ոթթու և մետա սիլիցիումական թթվի կալիումի և նատրիումի աղերը լուծվում են ջրի մեջ և կոչվում են լուծվող աղաղի, այն պատճառով, վոր նրանք իրենց արտաքին տեսքով նման են աղաղուն:


Քանի, վոր H_4 և SiO_4 -ը H_2SiO_3 -ը ներկայացնում են թույլ թթու, հետևաբար նրանց աղերը թթուների և նույնիսկ ածխաթթվի աղդեցությամբ հեշտությամբ տարրալուծվում են անջատելով սիլիկաթթուներ:




Յեթե այս ունակցիան կատարվի թունդ լուծութթում, այն դեղքում ամբողջ մասսան ստանում և թափանցիկ դոնդողային:

Դրություն: Թունդ լուծութթուներում H_2SiO_3 մնում և կոլոյիդալ դրությամբ:


Կալցիումի (CaCO_3) և գոլոմիտի ($\text{CaCO}_3, \text{MgCO}_3$) բացառությամբ, յերկրագնդի կեղեր կազմված և սիլիկաթթվի աղերից: Այժմ բոլոր այս սիլիկատներն ածխաթթվի աղդեցության տակ քերած միան հողմնահար մաքարդում շնորհիվ նրան, վոր յերկրագնդի կեղերի ջերմաստիճանը իջել և ընդհակառակի, բարձր ջերմաստիճանում հակառակ ունակցիան և կատարվում, այն եւ կարբոնատները քայքայվելով վեր են ածվում սիլիկատների: Որինակ, յեթե հայեք սողան կամ կրաքարը SiO_2 -ի հետ, այն դեղքում ունակցիան գնում և դեպի սիլիկատների գոյացումը:





Այս ունակցիան հակառակ և գնում ցածր ջերմաստիճանում, որինակ՝ դաշտային շղատը, որթոգլազը հողմնահարվում են ստորիվ բերված ունակցիայի համաձայն:



Այս պրոցեսի ժամանակ գոյացված K_2CO_3 լուծվում և ջրի մեջ և ծառայում բույսերի համար վորպես մնունդ, կարիքնը՝ վորպես չլուծվող նյութ նստում է, իսկ H_4SiO_4 -ը ջրի մեջ մնում է կոլոյիդալ դրությամբ: Այս վերջինից հետացնելով ջուրը ստացվում է սիլիցիումդիտքսիդ:




Արհեստական սիլիկատները մեղ համար ունեն խոշոր նշանակություն: Ապակին, ֆարֆորը, ֆայանսը՝ բոլորն եւ արհեստական սիլիկատներ են: Սովորական լուսամուտի ապակին իրենից ներկայացնում է նատրիումի և կալցիումի սիլիկատների խառնուրդը (համաձուլվածք) Na_2O , CaO , 6SiO_2 , այս նյութը ստացվում և սողայի, անդույն ափաղի և կալցիում կարբոնատի խառնուրդը շիկացնելով:



Սողան համեմատաբար ավելի թանգ նյութ լինելով, վորխ-


շինվում ե նատրիում-սուլֆատով, այս գեղքում վերականգնում
համար ավելացնում են ածուխ:





Յեթև սովորյի փոխարեն վերջնին պողաշ, այդ գեղքուա
ստացվում ե հրադիմացկուն-բոհմական ապակի: «Խը-
րուստալ» ապակի ստանալու համար ավելացնում են նաև կա-
պարոքսիդ:

Ա Ն Ա Գ


Բնության մեջ անագն ինքնածին զրությամբ հազվագյուտ
ե հանդիպում, նրա միացություններից են՝ SnO_2 և SnS_2 : Ած-
խածնի միջոցով վերականգնելով, նրա հանքերից ստանում են
անագ:



Շնորհիվ այն բանի, վոր անագի պահանջն ավելի մեծանում
է, նրան ստանում են ապիտակ թերթերից ելեկտրոլիդի միջոցով
և, նրան ստանում են սպիտակ արձաթուայլ մետաղ և, հեշտու-
թյամբ վեր և ածում բարակ թերթերից: Սովորական ջերմաստիճա-
նում ողում անագը չի ոքսիդանում և այդ պատճառով ել պղինձը
դողում են անագով: Բարձր ջերմաստիճանում անագն ողում այր-
վելով տալիս ե SnO_2 , Անագը լուծվում ե աղաթթվի և ծծմբական
թթվի մեջ և տալիս SnCl_2 և SnSO_4 :







Կծուները յեռացնելիս իրենց մեջ լուծում են անագ՝ որի-
նակ՝




Անագն ոքսիդներում ածխածնի նման լինում ե յերկու և
չորս արժեքական՝ SnO և SO_2 . Համապատասխան այդ ոքսիդների
աղերը կռվում են ստանու և ստանի:


Անագ-ինթրոքսիդ-անագ-յենթրոքսիդը (SnO) ստա-
նում են $\text{Sn}(\text{OH})_2$ -ը առանց ողի ներկայությամբ տաքացնելով.
այս վերջին ստանում և SnCl_2 -ից նոտրիում-հիդրոքսիդի կամ
կալիում-հիդրոքսիդի միջոցով





Մըջնաթթվի (H_2CO_3) նման K_2SnO_2 -ը ոքսիդանում ե և վեր-
ածվում K_2SnO_3 -ի: այս վերջինս անալոգ է կարբոնատների:
 SnO_2 -ը ստացվում է ողում SnO տաքացնելով. SnO_2 -ը չի լուծ-
վում թթուների մեջ: կծուների հետ ձուլելիս գոյացնում ե ա-
նազաթթվի աղեր (H_2SnO_3), անալոգ H_2CO_3 -ի և H_2SiO_3 -ի:



Ազոտական թթվի հետ անագը տաքացնելիս ստացվում
ապիտակ փոշի՝ մետանագական թթու (H_2SnO_3)
վում են՝




Անագը ծծումբի հետ տալիս է SnSS և nS_2 , վորոնք ստաց-



Կ Ա Պ Ա Ր

Կապարը բնության մեջ հանդես է գալիս վորակես կապա-
րի փայլը: Հանքերից կապար ստանում են կապարի փայլը տա-
րի քաշը: Հանքերից կապարի փայլը ($\text{PbS} + \text{Fe} = \text{FeS} + \text{Pb}$) և կամ PbS -ը
քացնելով յերկաթի հետ ($\text{PbS} + \text{Fe} = \text{FeS} + \text{Pb}$) կամ PbS -ը
այրում են ու վերածում PbO -ի ($2\text{PbS} + 3\text{O}_2 = 2\text{PbO} + 2\text{SO}_2$) և
այնուհետեւ PbS -ի ու PbO -ի խառնուրդը տաքացնում:



Կապարը սոխորագույն ու գույնի փափուկ մետաղ է. տեսա-
կարար կիմուր 11,34 կապարի կտարները չի լուծվում աղա-
կարար կիմուր 11,34 կապարի կտարները չի լուծվում աղա-
կարար կիմուր 11,34 կապարի կտարների միջ-
թթվի և ծծմբական թթվի մեջ, վորովհետև այդ թթուների միջ-
թթվի և ծծմբական թթվի մեջ տալիս է լուծվող PbCl_2 -ի
կամ PbCl_4 -ի շերտով, մինչդեռ կապարի փոշին ընդհակառակը
լուծվում է վերեւում հիշված թթուների մեջ:

Կապարը թթվածնի հետ տալիս ե 1) կապարյենթքսիդ, PbO_2
 Pb_2O_3 , 2) կապարոքսիդ, PbO և 3) կապարալերոքսիդ PbO_3 .

Կապարը թթվածնի հետ տալիս է կապարոքսիդ ստացվում ե բաձր ջերմ-
ապար ոքսիդ: — կապարոքսիդ ստացվում ե բաձր ջերմ-
ապար ոքսիդ: Կապարը լուծվելով HNO_3 -ի և
աստիճանում կապարն այրելուց: Կապարը լուծվելով HNO_3 -ի և
քացախաթթվի մեջ տալիս է PbO -ին համապատասխանող աղեր
 $\text{Pb}(\text{NO}_3)_2$ և $\text{Pb}(\text{CH}_3\text{CO}_2)_3$.


Այս աղերը կծուների հետ տալիս է $\text{Pb}(\text{OH})_2$ նստվածքը:
 $\text{Pb}(\text{NO}_3)_2 + 2\text{KOH} = \text{Pb}(\text{OH})_2 + 2\text{KNO}_3$

$\text{Sn}(\text{OH})_2$ -ի նման $\text{Pb}(\text{OH})_2$ -ը նույնպես ամֆոտեր է, լուծվում
կծուների ավելցուկի մեջ ու տալիս պլումբատն եր:




Կապարի աղերի վրա ազդելով լուծվող կարբոնատներ ըստացվում ե հիմնային կարբոնատ $PbCO_3$. $Pb(OH)_2$, վորը սպիտակ ամորֆ մասսա յի և գործ են ածում վորպես սպիտակ ներկ:


Կապարի գի ոք սիդ.—կապարդիոքսիդա (PbO_2) կապարը հանդես է գալիս չորս արժեքական: Կապարդիոքսիդը ստացվում է կապարօքսիդն ոքսիդացնելով քլորի, բրոմի կամ հիպոքլորիդի միջոցով: Տեխնիկայում այս ոքսիդը ստացվում է քլորի մոջոցով ոքսիսաղացնելով $Pb(CH_3CO_2)_2$ -ը:




Կամ սուրիկի (Pb_3O_4) վրա ազոտական թթու




Տեսականորեն PbO_2 -ը հանդիսանում է որթո և մետա կապարական թթվի անձիրիդը:



Կապարդիոքսիդը տաքացնելիս բաց և թողնում իր մի թթվածինը և վերածվում կապարօքսիդի:



Այս պատճառով կապարդիոքսիդն ունի ուժեղ ոքսիդացնող հատկություն: PbO_2 -ի և HCl -ի խառնուրդը տաքացնելիս անջատվում է քլորը:



Կապարդիոքսիդը սառն HCl -ի հետ միանալով տալիս է $PbCl$. PbO_2 -ը լուծվում է հիմքերի միջև գոյացնում է մետապլումբատ:



ԱԾԽԱԾՆԻ ԽՄԲԻ ԵԼԵՄԵՆՏՆԵՐԻ ԸՆԴՀԱԳՈՒՐԸ

Այս խմբի ելեմենտները հանդեպ թթվածինը, հալոգենները և մյուս ելեմենտները հանդեպ թթվածինը, հալոգենները չորս արժեքական, ինչպես այդ համապատասխանում է նրանց խմբի համարին:

Ածխածինը տալիս է CO_2 և CS_2 նաև CO և CS , վորոնք շատ անկայուն միացություն են: Սիլիցիումը տալիս SiO_2 և SiS_2 նաև SiO և SiS , վորոնք նույնպես շատ անկայուն միացություն են: Անագի նկատմամբ նրա 4 և 2 արժեքական միացությունները

համարյա նույն կայունությունն ունեն, իսկ կապարի մոտ յերկարժեքական միացություններն իրենց կայունությամբ բռնում են առաջին տեղը: Զրածնի հետ նրանք բոլորն ել տալիս են ցնդող միացություն: Ինչպես պարբերական սխմանմի բոլոր խմբերում, նույնպես նև այս խմբում ատոմական կշռի աճումով թուլանում ե ելեմենտների թթվային հատկությունը և ընդհակառակն, ուժեղանում ե հիմնային հատկությունը: Այս խմբում C և Si ունեն պարզ մետալոյիդական հատկություն, իսկ Sn և Pb՝ պարզ մետաղական հատկություն: Հետևապես հիմնային հատկությունն ուժեղանում ե ցածր արժեքականությամբ ուժեղանում ե թթվային հատկությունը: Չորս արժեքական աղերը պահպանում են թթվային բնույթը, իսկ յերբ արժեքական միացություններն ամփուեր հատկություն. կապարում այս թթվային հատկությունը պակասում ե: Կապարի չորս արժեքական միացությունները բավականին թույլ թթվային հատկություն ունեն անագի հետ համեմատած: Անագի նման կապարի յերկարծեք միացություններն ունեն ամփուեր հատկություն:

ԱՂՅՈՒՍԱԿ XXI

ԱԾԽԱԾՆԻ ԽՄԲԻ ԵԼԵՄԵՆՏՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

	C	Si	Sn	Pb
Ատոմական կշռ	12	28,06	118,7	207,2
Ֆիզիկական վիճակի սովորական ջերմաստիճանում	կ ա ր ծ ր			
Գույնը սովորական ջերմաստիճանում	կ ա ր ծ ր	կ ի ն ո մ ն ա գ ու ն ա կ ա ր ծ ր	Սպիտակ և մոխրագույն	Սուրացույն
Տեսակարար կարգ	Ալմաստ 3,5 Գրաֆիտ 2,3 ամորֆ. 1,7-1,8	Ամորֆ 2,55 բյուրեղային 2,4-3	Սպիտակ 7,28 մոխրագույն 5,7	11,34
Հալման աստիճան	Գրաֆիտը ճնշման տակ 3900°	Բյուրեղային 1500	231,9	327
Ցուման աստիճան	—	2500° բարձր	Սոսավորապես 2300°	Սոսավորապես 1500°

ԱՂՅՈՒՍԱԿ ԽII

Ա. ԾԽԱԾՆԻ ԽՄԲԻ ԵԼԵՄԵՆՏՆԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Մետալիդ		Ցերկարիքական միացություններ	Չորս արժեքական միացություններ			
Ֆժվար հաւ- կող	Զբածնա- կան միա- ցություն- ներ	Մետալոր- իդական ոքակու-	Թթվային անհիդ- րիդներ	Թթվային անհիդ- րիդներ	Քլորիդ- ներ	
	Ելզաբերդ	Ցնորդ	Թուլիթը- թուլ	Ցնորդ	Թուլիթը- թուլ	Կայուն
C	CH ₄	CO	H ₂ CO ₂	CO ₂	H ₂ CO ₃	CCl ₄
Si	SiH ₄	—	—	SiO ₂	H ₂ SiO ₃	SiCl ₄
Sn	SnH ₄	SnO	H ₂ SnO ₂	SnO ₂	H ₂ SnO ₃	SnCl ₄
Pb	PbH ₄	PbO	H ₂ PbO ₂ Pb(OH) ₂	PbO ₂	H ₂ PbO ₃	PbCl ₄
Հեղա հալվող	Ենորդերդ	Զցնորդ	—	Զցնորդ	Շատ ան- կայուն	Շատ ան- կայուն
Մետաղ	—	Մետաղա- կան ոք- ակուներ	Թուլիթը- հիդր	—	Թուլիթը- թուներ	—

ՓՈՐՁԵՐ ԿԱՐԲՈՆԱՏՆԵՐԻ ՀԵՏ

I. Տարեր փորձանոթների մեջ վերցրեք՝ կավիճի, կրաքարի, մարմարի, մագնիսիտի կտոր և ավելացրեք աղաթթու. փորձանոթի բերանի մոտ պահեցեք բարիում հիդրօքսիդով, Ba(OH)₂ կամ կալցիում-հիդրօքսիդով Ca(OH)₂ թրջած ապակյա ձող. Ի՞նչ եք նկատում. գրեցեք կարբոնատների տարրալուծման ռեակցիան:

II. Յերկու հավանքի մեջ մանրացրեք նատրիում-բիկարբոնատի և գինեթթվի մեծ կտորներ և այդ յերկու փոշիներն ապակյա չոր ձողով խառնեցրեք իրար. խառնուրդը փոփոխման չի յենթարկվում: Խառնուրդը լցրեք ջրի մեջ. Ի՞նչ եք նկատում. ինչո՞վ բացատրել այդ յերեսույթը:

III. Յերկու փորձանոթի մեջ տեղավորեցրեք մարմարի կտոր

մեկի վրա ավելացրեք աղաթթու, իսկ մյուսի վրա ձժմբական թթու. Ինչու համար յերկրորդ դեպքում մարմարը չի լուծվում: Այս փորձը կրկնեցեք՝ միայն մարմարի փոխարեն վերցրեք մագնիսիտ. ինչու այս դեպքում մագնիսիտը լուծվում է թե աղաթթվի և թե ծծմբական թթվի մեջ:

IV. Աղաթթվի մեջ լցրեք մեկ գրամ չոր սոդա. կնկատեք, թե ինչպես դուրս է գալիս CO₂ գազը: Մեկ գրամ սոդա լուծեք մեկ լիտր ջրի մեջ և ավելացրեք քիչ աղաթթու. ինչու CO₂-ը չի անջատվում:

V. Կորլայի միջ դրեք մարմարի մի քանի կտոր և ավելացրեք 20 cm³ աղաթթու. ստացված CO₂-ի հոսանքն անցկացրեք փորձանոթի մեջ, վորտեղ լցված և 10 cm³ կրածուր—Ca(OH)₂ գոյանում և CaCO₃ նստվածքը. շարունակեցեք փորձանոթի մեջ մտցնել նորից CO₂-ի հոսանք. նստվածքը կլուծվի, վորովինեան գոյանում և թթու կարբոնատ: Գրեցեք CaCO₃-ի և Ca(HCO₃)₂-ի գոյացման ռեակցիան: Բաժանեցեք բիկարբոնատի լուծույթը չորս մասի և լցրեք չորս տարրեր փորձանոթների մեջ: Մի փորձանոթի վրա լցրեք նուրացրած կրածի լուծույթ, յերկրորդին՝ նատրիում-հիդրօքսիդ, յերրորդին՝ սոդայի լուծույթ, իսկ չորրորդին՝ մի քանի բոպի տաքացրեք սպիրտովկայի վրա: Բոլոր չորս փորձանոթների մեջ դույնում և նորից նստվածք: Գրեցեք այս չորս փորձանոթների մեջ տեղի ունեցող ռեակցիաները:

ՓՈՐՁԵՐ ԽՄԵԼՈՒ ԶԲԻ ՀԵՏ

Վորոշեցեք՝ արդյոք ձեր խմելու ջուրը պարունակում է կիսակապված ածխաթթու:

Ջրից նմուշի համար վերցրեք SO cm³, 10 բոպե յեռացրեք այդ ջուրը յերբ ջուրը պարունակում է իր մեջ կիսակապված ածխաթթու. որինակ՝ Ca(HCO₃)₂, այն դեպքում կկոյանա նըստվածք, վորի մի մասը մանր բյուրեղների ձևով կնստի անոթի պատերին. թողեք անոթը 5 բոպե հանգիստ մնա. առանձնացրեք նստվածքը և վերջինիս վրա ավելացրեք մի քանի կաթիլ աղաթթու. ստացված CO₂ գազն անցկացրեք մաքուր ջրի մեջ և փորձեցրեք լակմուսով:

ԳՐԱՎՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ՀԵՏՎԱՅԱԼ ՀԱՐՑԵՐԻՆ

I. Քանի գրամ H₂SO₄ և հարկավոր լուծել մեկ լիտր ջրի մեջ, վորպեսզի ստացվի դեցինորմալ լուծույթ:

Պատասխան՝ 4,9 գրամ.

2. Ինչո՞վ բացատրել այն յերկույթը, վոր ծծումքը գըտ-
նվում է հրաբխային վայրերում:

3. H_2S -ն և թեթե , թե SO_2 -ը:

4. Ի՞նչ թունավոր գաղ գիտեք, վորը կարող է վոչնչացնել
 H_2S -ը:

5. Քիմիական ի՞նչ հատկությամբ և տարբերվում թունդ
 H_2SO_4 -ը նոսր H_2SO_4 -ից:

6. Ինչո՞վ կարելի յե հայտնաբերել SO_4^{2-} իոնը:

7. Ի՞նչ գունավոր սուլֆատներ գիտեք:

8. Ի՞նչ միջոցով կմըրելի յե սուանալ H_2S և SO_2 գազերը:

9. Քանի գրամ Na_2CO_3 և պահանջում 10 cm^3 2 նորմա-
լանի ծծմբական թթուն չեղոքացնելու համար:

Պատասխան՝ 1, 06 գրամ

10. Վորոշեցեք նորմալ ծծմբական թթվի տոկոսային լու-
ծույթը:

11. Քանի կիլոգրամ մարմար և պետք, վորպեսզի ստացվի
100 լիտր ածխադիտքսիդ գազ:

Պատասխան՝ 0,146 կիլոգրամ

12. Գրեցեք Na_3PO_4 , $(NH_4)_2CO_3$, $ZnSO_4$, $Cu(NO_3)_2$ աղե-
րի հիդրոլիզի ռեակցիան:

13. Ինչո՞վ և տարբերվում փայտի չոր թորումը նրա այ-
րումից:

14. Ինչո՞վ կարելի յե ցույց տար, վոր իրոք CO_2 -ը պարու-
նակում է ածխածին:

15. Ի՞նչ ռեակցիայով կարող եք տարբերել CO_2 -ը պղոտից:

16. Ինչո՞վ ցույց կտաք, վոր CO_2 -ը թթվածին ոքսիդ է:

17. Քանի լիտր թթվածին և հարկավոր, վորպեսզի 10 լիտր
ածխածոնքսիդը վերածվի ածխադիտքսիդի, ստացված ածխադի-
քսիդը նորմալ պայմաններում քանի լիտր ծավալ կունենա:

Պատասխան՝ 5 լիտր բրվածին, 10 լիտր CO_2

18. Քանի գրամ $Ca(OH)_2$ և պահանջում, վորպեսզի 4 գրամ
 CO_2 գազը լինի կլանի:

Պատասխան՝ 7.5 գրամ

19. Քանի գրամ $Ca(OH)_2$ և պահանջում, նույնքան CO_2
գազից բիկարբոնատ ստանալու համար:

Պատասխան՝ 3% գրամ

20. Ազուրն և ծանր, թե ածխածին ոքսիդը:

21. Ինչո՞վ բացադրել այն, վոր K_2CO_3 -ի և Na_2CO_3 -ի լու-

ծույթը կարմիր լակմուսը ներկում են կապույտ գույնի:

22. Թեև ածխադիտքսիդը մեծ քանակությամբ ստացվում է
քարածուխի, փայտի, նաևլթի այրումից, արտաշնչման ժամանակ
խաղողի խմորումից և այն, ինչո՞վ բացադրել այն հանգամանքը,
վոր CO_2 -ի տոկոսն ողում այդքան քիչ ե. այն է $0,03\%$:

23. Քանի գրամ սողա պետք և շիկացնել SiO_2 -ի հետ, վոր-
պեսպի ստացվի 2 կիլոգրամ լուծվող պակակի:

Պատասխան՝ 1,73 կիլոգրամ

24. Նորմալ պայմաններում վորքմն կլորի 1 լիտր H_2S -ը:
Պատասխան՝ 1,51 գրամ

25. Քանի գրամ FeS և հարկավոր, վորպեսզի ստացվի 10
լիտր H_2S :

Պատասխան՝ 29,3 գրամ

26. Քանի լիտր թթվածին և հարկավոր, 20 գրամ SO_2 -ը
 SO_3 -ի վերածելու համար:

Պատասխան՝ 3,5 լիտր

27. Հաշվեցեք քանի cm^3 H_2SO_4 և հարկավոր (տեսակարար
կլոր 1,84 և վորը պարունակում է $96,5\%$ H_2SO_4) նոսրացնել
ջրի հետ մինչև մեկ լիտր, վորպեսզի ստացվի նորմալ լուծույթ:

28. Քանի գրամ $96,5\%$ -անի ծծմբական թթու յե հարկավոր,
վորպեսզի չեղոքացնի 40 գրամ նատրիում-հիդրօքսիդ:

29. 200 գրամ ծծմբի այրումից ստացված SO_2 գազը նոր-
մալ պայմաններում քանի լիտր ծավալ կունենա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- I. А. Реформатский— „Неорганическая химия“ 1929 թ.
 Եջ՝ 274—283 պարագրաֆ 90—93
 » 385—399 » » 160—165
 » 320—333 » » 108—115
 » 340—353 » » 118—125
 » 500—510 » » 208—210
- II. Ив. Каблуков— „Основные начала неорганической химии“ 1929 թ.
 Еջ՝ 206—244 պարագրաֆ 1—35
 » 113—132 » » 1—21
 » 337—342 » » 1—7
- III. Н. Л. Глинка— „Неорганическая химия“ 1931 թ.
 Еջ՝ 209—234 պարագրաֆ 116—134
 » 297—340 պարագրաֆ 175—201
 » 406—410 » » 228—230
- IV. Ողենայիլը— «Անորգանական քիմիա» 1926 թ.
 Եջ՝ 134—144 պարագրաֆ 78—85
 » 166—176 » » 102—108



Акуини и Абраамян

НЕОРГАНИЧЕСКАЯ ХИМИЯ

(№ 6)

ԱՆՈՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ. ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 6-ՈՒՄ ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եզ.	Տեղ	Տպված և	Պիստ և լինի
4	18-րդ վերկից	2FeS ₂	4FeS ₂
»	4-րդ ներք.	սուլֆիդներ	սուլֆիդներ
5	3-րդ վերկից	սուլֆիդներ	սուլֆիդներ
»	8-րդ »	սուլֆադներ	սուլֆադներ
8	7-րդ »	չաներում	թասերում
11	12-րդ ներք.	SO ₂	SeO ₂
15	7-րդ վերկից	5H ₂ SO ₄	5H ₂ SO ₃
»	14-րդ »	KSO ₃	K ₂ SO ₃
»	10-րդ ներք.	HSO ₃	H ₂ SO ₃
16	7-րդ վերկից	նատրիում-սուլֆիտի	նատրիումսուլֆիդի
18	4-րդ ներք.	SO	5O
19	9-րդ վերկից	սքսիդների	մետաների
19	1-ին ներք.	12HO	12H ₂ O
21	6-րդ վերկից	SO ₂	SiO ₂
21'	6-րդ ներք.	4HCO	4HCl
22	7-րդ »	H ₄ և SiO ₄ -ը	H ₄ SiO ₄ -ը և
23	17-րդ վերկից	Al ₂ K ₂ (Si ₃ O) ₂	Al ₂ K ₂ (Si ₃ O ₈) ₂
24	10-րդ ներք.	SO ₂	SnO ₂
25	11-րդ վերկից	SnSS և nS ₂	SnS և SnS ₂
»	13-րդ ներք.	PbCl ₄	PbSO ₄
»	5-րդ »	Pb(CH ₃ CO ₂) ₂	Pb(CH ₃ CO ₂) ₂
»	17-րդ »	մոխրագույն սև գոյնի	կապույտ գոյնի
26	18-րդ վերկից	PbO ₂ —H ₂ O=H ₂ PbO ₃	PbO ₂ =PbO+O
»	24-րդ »	PbCl	PbCl ₄
»	4-րդ »	վորոնք	վերջնա
29	12-րդ ներք.	SOcm ³	5O Cm ³

Գրքի մեջ բոլոր թերությ խոսքերը կարուալ թելուր:



ՀՀ Ազգային գրադարան

15k w#1
ap 2

518

